



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 12 ՅՈՒՆԻՈՒՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստաբար չոր Յիսուս, Կուր ինձ իմաստաբար զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚ս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՂՈՒԿԱՍ 1:46-55

ՄԱՐԻԱՄԻ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻԻՆԸ

Տէրը պիտի գովաբանեն.

ահա հոգիս կ'ուրախանայ Աստուծոյ, իմ Փրկիչոյ,
որովհետեւ ան տեսաւ իր աղախինին հեզութիւնը:
Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի,
քանի հզօրն Աստուած ինձի համար մեծամեծ գործեր կատարեց.
սուրբ է անունը անոր:
Բոլոր ժամանակներուն մէջ ողորմութեամբ ան կը նայի
աստուածավախ մարդոց վրայ:
Իր բազուկով ան զօրութիւն ցոյց տուաւ,
ոչնչացուց հպարտները՝ իրենց բոլոր խորհուրդներով:
Գահազրկեց արքաները
եւ բարձրացուց խոնարհները:
Անօթիները բարիքներով լիացուց,
մինչ հարուստները դատարկածեռն արձակեց:
Պաշտպան եղաւ իր ծառային՝ Իսրայէլի,
հաւատարիմ մնալով իր ողորմութեան,
ինչպէս որ խոստացած էր մեր հայրերուն՝
Աբրահամի եւ անոր զաւակներուն:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՂՈՐՔ

*Պահապան ամենայնի Գրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԹԸ



ԵԼԻՑ ԺԸ (18) ԳԼՈՒԽ



ՅՈԹՈՐ ՄՈՎՍԷՄԻՆ Կ'ԱՅՅԵԼԷ (18:1-12)

«Մովսէս իր աները դիմաորելու գնաց եւ անոր խոնարհութիւն ըրաւ ու համբուրեց զանիկա» (7 հմբ):

«Մովսէս պարմեց այն ամէնը, որ Տէրը ըրաւ...: Եւ Յոթոր ուրախացաւ բոլոր բարութիւններուն համար, որոնք Տէրը ըրաւ Իսրայէլին, փրկելով զանոնք Եգիպտացիներուն ձեռքէն: Եւ ըսաւ. "Օրհնեալ ըլլայ Տէրը, որ ազատեց ձեզ Եգիպտացիներուն ձեռքէն ու Փարաունին ձեռքէն: Հիմա գիտեմ թէ Եհովա բոլոր աստուածներէն մեծ է. քանզի ինչ բանի մէջ որ կը հպարտանային, անոնցմէ վեր երեւցաւ» (8-11 հմբ):

Ահա Մովսէսի աները՝ Յոթոր, որ կ'ապրէր Միդիանի մէջ, եւ որ քուրմ մըն էր, հետը բերելով Մովսէսի կինն ու երկու զաւակները՝ Գերսամ եւ Եղիազար, եկած էր իր ուրախութիւնը յայտնելու Մովսէսին յաջողութիւններուն համար, զոր Աստուած պարգեւած էր Մովսէսին, եւ ի փես այս յաջողութիւններուն փառաբանելու զԱստուած, Անոր կարարած այն սքանչելիքներուն, թէ ինչպէս ազատեց էր Իսրայէլի ժողովուրդը, դաւանելով թէ Ինքն է բոլորէն վեր եղող Աստուածը: Այս առիթով նաեւ զոհ ու ողջակէզ կ'ընծայեն եւ Աստուծոյ առջեւ հաց կ'ուրբեն: Այս զոհը ուրիշ բան չէ թէ ոչ շնորհակալութեան արտայայտութիւն: Միւս կողմէ, ընծայել յետոյ անոր ճաշակումը, կը նշանակէ, քանի Յոթոր կ'ընդունի Եհովան իբրեւ վեր բոլոր աստուածներէն, նաեւ կրնայ ճաշակել այդ զոհէն:

ՂԱՏԱԲՈՐՆԵՐՈՒՄ ԱՆՈՒՄՆՈՒՄԸ (18:13-27)

Այս հարուածը կը ներկայացնէ գործնական քայլերը թէ ինչպէս Մովսէս յանձն պիտի առնէ ժողովուրդին դատերը փեսնելու, որովհետեւ առանձինն ի վիճակի պիտի չըլլայ: Հետեւաբար, Յոթոր կ'առաջարկէ որ Մովսէս իրեն համար օգնականներ ընտրէ, բայց այդ օգնականները պէտք էր որոշ նկարագիր մը ունէին, այսինքն՝ «**Դուն բոլոր ժողովուրդէն կարող մարդիկ, Աստուծմէ վախցող, ճշմարտասէր ու ազահութիւնը արող մարդիկ ընտրէ**» (21 հմբ): Այս օգնականները յետագային պիտի կազմէին Մինեհեփրիոնը, այն գերագոյն արեանը Իսրայէլի ժողովուրդին դատական հարցերու հետ կապուած:

Տակաւին, որպէսզի Մովսէս աւելի ժամանակ ունենայ Աստուծմով անցնելու եւ Անոր պարգամները ժողովուրդին փոխանցելու. «**Ժողովուրդին համար Աստուծոյ առջեւ դուն գնա, որպէսզի դատերը դուն ներկայացնես Աստուծոյ: Անոնց սորվեցուր կանոններն ու օրէնքները եւ գիտցուր անոնց իրենց քաղելու ճամբան ու իրենց ընելու գործը**» (20 հմբ):

Աստուածավախութիւնը միայն պաշտամունքային երես չունի, այլ նաեւ կապուած է Աստուծոյ օրէնքին հետ: Միւս կողմէ, աստուածավախութիւնը նաեւ կը նշանակէ Աստուծոյ երկիւղը ունենալ, այսինքն՝ աստուածային իմաստութիւնը՝ ճանչնալու Աստուծոյ կամքը եւ ըստ այնմ դատերը փեսնելու: Առակաց գիրքը կ'ըսէ. «իմաստութեան սկիզբն երկիւղ Տեառն»: Ուրեմն, աստուածավախութիւնը Աստուծմէ սարսափի չի նշանակէր, այլ Անոր կամքը հասկնալու իմաստութիւնը ունենալ: Արովհետեւ այն մարդը որ Աստուծմէ կը վախնայ, կը նշանակէ հնազանդ է Աստուծոյ կամքին եւ օրէնքներուն:

Ճշմարտասէր ըլլալ կը նշանակէ ճշմարտութիւնը ամէն բանէ վեր նկատել առանց խորութիւններ, կողմնակալութիւններ ընելու, եւ անաչառութեամբ ժողովուրդը ճշմարտութեան ճամբով առաջնորդելու:

Ազահութենէն հեռու կամ անկաշառ պէտք է ըլլայ, որովհետեւ դրամը եւ հարստութիւնը շլացնող երեւոյթ է մարդ արարածի համար: Կաշառակեր մարդը կրնայ յաճախ իր ժողովուրդի շահերուն հակառակ գործել: Այսպիսին պէտք է որ ըլլան անոնք որոնք Աստուծոյ ներկայացուցիչը պիտի ըլլան եւ ըստ այնմ առաջնորդեն ժողովուրդը:

«**Մովսէս աներոջ խօսքը մտիկ ըրաւ ու անոր ամէն ըսածը կատարեց**» (24 հմբ): Այս ընելով Մովսէս ցոյց կու տայ իր խոնարհութիւնը: Հակառակ ամբողջ ազգի մը առաջնորդը ըլլալուն, հրաշքներ գործելուն, Կարմիր ծովը ճեղքելուն, ժողովուրդ մը ամբողջ առաջնորդելուն, բայց ան խոնարհութեամբ մտիկ կ'ընէ աներոջ փուստ խորհուրդները: